ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ԱՐՓԻՆԵ ՉԱՆԹԻԿՅԱՆ

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Հայ Եկեղեցու նվիրյալ եւ ականավոր հայր Հովհան Մանդակունին Կաթողիկոս դարձավ ծանր եւ դժվարին ժամանակ:

Ըստ պատմական աղբյուրների՝ Գյուտ Կաթողիկոսը վաղուց տեղափոխվել էր Ռոմ եւ իր գործունեությունը կարողանում էր միայն հոգեւոր շրջանակում վարել: Պարսից Ափրվշնասպ մարզպանը եւ Վեհվեհնամ հազարապետը դաժան հալածանքների էին ենթարկում քրիստոնյաներին: Պերոզ թագավորը, հայերին ճնշելով եւ փկարացնելով, խափանում էր ազատագրական շարժման ցանկացած փորձ: Իսկ Գյուտ Կաթողիկոսի վախճանից հետո Հայաստանը հայտնվում է անտերունչ եւ քաոսային վիճակում:

Այսպիսի պայմաններում կաթողիկոսական ընտրություն անցկացնելը գրեթե անհնար էր: Իսկ ըստ Օրմանյանի՝ նման իրավիճակներում, երբ հանդիպում էին արժանավոր, գործունյա, առաքինի եւ իր կարողությունները աներկյուղ դրսեւորող հոգեւոր գործչի, ընդունում էին, որ դա նախախնամություն է[1]: Գյուտ Կաթողիկոսը օգնական էր ընտրել Հովհան Մանդակունուն, որը դեռեւս իր կենդանության օրոք ստանձնել էր հոգեւոր գործերի ղեկավարումը, իսկ ավելի ուշ՝ 478 թվականին դառնում է Հայոց Կաթողիկոս:

Որոշ տեղեկությունների համաձայն՝ Հովհան Մանդակունի Կաթողիկոսը ծնվել է Ծախնոտ (Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Արշարունիք գավառում) գյուղում եւ աշակերտել Սահակ Պարթեւին[2]: Սակայն առավել հավանական է, որ Հովհան Մանդակունին, իբրեւ պարծանք հիշատակել է Սահակ Պարթեւի անունը, լինելով նրա սաների աշակերտը: Հովհան[3] Մանդակունին ուսանել եւ բազմակողմանի կրթություն է ստացել նաեւ հունական նշանավոր դպրոցներում:

Հայրապետ Հովհան Մանդակունուն մտահոգում էր հայրենիքի եւ Եկեղեցու պաշտպանությունը: Կաթողիկոսության առաջին տարիներին՝ 478-481 թթ. նոր գործ չի ձեռնարկում, որովհետեւ երկրի ներքին եւ արտաքին վիճակը հնարավորություն չէին ընձեռում: Հայրապետը կիսում էր իր ժողովրդի տարաբախտ ճակատագիրը եւ պատերազմի ժամանակ մշտապես լինում հայոց զորքի կողքին: Այսպես՝ Ակոռիի 481 թ. ճակատամարտում հայերը փայլուն հաղթանակ են տանում, եւ Հայոց Կաթողիկոսը Դվինի եկեղեցում մեծ հանդիսությամբ գոհաբանական աղոթք է ասում՝ Իթ սաղմոսը երգել տալով. «Լուաւ ինձ Տէր եւ ողոր-

1 Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա, Բէյրութ, 1959, էջ 453:

2 Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 454:

3 Հովսեփ Հողոցմեցի Կաթողիկոսի օգնական Հովհանին չպետք է նույնացնել Հովհան Մանդակունու հետ, քանի որ վերջինս 439 թ. նորահաս պատանի էր եւ չէր կարող Կաթողիկոսի օգնականի հարմար թեկնածու լինել:

մեցաւ, եւ Տէր եղեւ ինձ օգնական: Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն. զերծ յինէն զքուրձ, եւ ինձ զգեցոյց զուրախութիւն: Որպէս սաղմոս ասասցեն քեզ փառք իմ, եւ այլ մի՛ եւս զղջացայց, Տէր Աստուած իմ, յաւիտեան խոստովան եղէց քեզ»[4]:

Պարսիկները որոշ ժամանակ չեն կարողանում վերականգնել իրենց կորուստները, եւ հայերը ղեկավարվում են այն ժամանակավոր իշխանությամբ, որ կազմվել էր պատերազմից առաջ՝ Կաթողիկոսի հովանավորությամբ: Սակայն գարնանը՝ Ս. Հարության տոնից՝ ապրիլի 25-ից հետո, հայերը տեղեկանում են, որ պարսիկները Հեր եւ Զարեւանդ գավառների միջեւ ընկած ճանապարհով մոտենում են, ուստի, նրանց առաջխաղացումը կանխելու համար հայոց գնդերը շարժվում են Արտազ գավառի ուղղությամբ: Հովհան Մանդակունին եւս միանում է բանակին՝ աղոթելով եւ օրհնելով, հորդորելով եւ քաջալերելով: Ճակատամարտը տեղի է ունենում Ներսեհապատ գյուղի մոտ, ուր հայոց զորքը հերթական անգամ ցուցաբերում է իր արիությունը եւ հաղթանակով վերադառնում Կաթողիկոսի մոտ, որը պատերազմի ողջ ընթացքում հոգեւորականների հետ աղոթում էր եւ զինվորներին օրհնելով՝ ասում. «Ուրախ եմ յոյժ, եւ բանիւ վճարել զխնդութիւնս սրտի ոչ կարեմ: Բայց եւս առաւել զուարճացեալ բերկրիմ, տեսանելով զԱստուած հաշտ ընդ ձեզ. քանզի յաղթութիւնս խնդացուցանէ զիս, այլ եւս առաւել բերկրիմ՝ զՔրիստոս տեսանելով գործակից ձեզ, որ եւ ձեզ՝ յաղթել, եւ ամաչեցոյց զհակառակորդս արդարութեան: Եւ Աստուած որ զօրացոյցն զձեզ այժմ՝ նա զօրացուսցէ զձեզ հանապազ, եւ եղեալ ընդ ձեզ՝ մի՛ թողցէ զձեզ մինչեւ ի սպառ...»[5]:

Ներսեհապատը մոտ էր Ավարայր գյուղին, Արտազի դաշտին, ուր երկրորդ անգամ հանուն հավատքի նահատակվեցին հազարավոր հայորդիներ:

Հովհան Մանդակունու կաթողիկոսության ժամանակաշրջանում է տեղի ունենում նաեւ Ճարմանայի ճակատամարտը, ուր վրացիների կողմից նենգորեն խաբված հայերը մեծաթիվ զոհեր են տալիս, իսկ գերեվարվածների մեծ մասը նահատակվում է: Նահատակներից էր Յալդ Սյունին, որը ոչ մի սապառնալիքի եւ հալածանքի տեղի չի տալիս, դավանափոխ չի լինում եւ քրիստոնեաբար նահատակվում է՝ գլխատվելով Բագրեւանդի Ս. Հովհաննես եկեղեցու մոտ 482 թ. սեպտեմբերի 12-ին: Ասողիկ պատմիչը նրա մասին ասում է՝ «...վկայեալ վասն Քրիստոսի քաջութեամբ»[6], սակայն ուրիշ ոչինչ չի ավելացնում, ինչը հնարավորություն կընձեռեր մեր ունեցած տեղեկություններն առավել ամբողջական դարձնելու: Այս բոլոր դժվարություններից հետո հայ ժողովուրդը իր արյունալի հաղթանակների պտուղ՝ խաղաղությունն է վայելում Վահան Մամիկոնյանի մարզպանության տարիներին: Ժողովրդի խանդավառությունը կիսում է նաեւ Հովհան Մանդակունի Հայրապետը՝ գոհաբանական Ս. Պատարագ մատուցելով սաղմոսներով եւ հատուկ ընթերցվածքներով, ինչպիսիք էին օրինակ՝ փարավոնի գերությունից Իսրայելի ժողովրդի ազատագրումը, Սողոմոնի թագավոր հռչակվելը: Ղազար Փարպեցին չի հիշատակում, թե երբ է Վահան Մամիկոնյանը մարզպան դարձել: Սամուել Անեցին Վահանին մարզպանության հրովարտակի ուղարկումը թվագրում է 507 թվականով[7], որի սխալ եւ անընդունելի լինելն ակնհայտ է: Եւ ինչպես Անե-

4 **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմութիւն, Երեւան, 1982, էջ 306:

5 Անդ, էջ 316:

6 **Մաղաքիա արք. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 454-456:

7 Տե՛ս «Սամուէլի քհն. Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 72:

ցու աշխատության մեջ Քաղկեդոնի ժողովի թվականը պետք է ուղղել՝ 473-ը դարձնելով 451 թ., այնպես եւ նրա նշած թվականից պետք է հանել քսաներկու տարի եւ կստանանք 485 թ.:

Ղազար Փարպեցին իր պատմությունն ավարտում է Հովհան Մանդակունու ատենաբանությամբ՝ ասված Վահանի մարզպանության առիթով[8]: Այս ատենաբանությունը բավական ընդարձակ է, սակայն կառուցվածքային կանոնավոր տեսք չունի, քանզի պատմագիրը այն կազմել եւ ամբողջացրել է կցկտուր հատվածներով եւ ակնարկներով: Փարպեցին, անշուշտ, ներկա է եղել, երբ Կաթողիկոսը Դվինի եկեղեցում խոսել, հորդորել եւ քարոզել է, ուստի Հայրապետի ճառն ամբողջացրել է այն հատվածներով, որոնք ինքը նշել կամ հիշել է: Այս առթիվ Մաղաքիա արքեպ. Օրմանյանը նշում է. «Սղագրութեան արհեստը չունէր, որ աւելի կատարեալ կերպով կարենար ատենաբանին խօսածը գիրի առնել, որով գրաւիչ եւ նշանաւոր կէտերը միայն կրցած է նշանակել»[9]: Կարելի է ենթադրել, որ պատմագիրը պարզապես չի ցանկացել Հովհան Մանդակունու արտասանած ճառը ինքնակամ փոփոխությունների ենթարկել: Ըստ պատմագրի՝ Հովհան Մանդակունի Կաթողիկոսը ուրախության այս պահին էլ ժողովրդի մեջ նկատում է երկու թեւերի՝ ազգասերների եւ պարսկամետների հակասությունների վտանգը եւ փորձում է քարոզել անհիշաչարություն, ներողամտություն, սեր, միասնություն, հաշտություն՝ հետամուտ լինելով երկրում խաղաղության հաստատմանը: Իսկ Մաղաքիա արքեպ. Օրմանյանը գրում է. «Չի կրնար ամենայն ինչ բաց խօսքերով արտասանել, չի համարձակիր ամեն ճշմարտութիւն անպատրուակ հռչակել, չուզէր ուխտապահներուն նախանձայուզութիւնը վիրաւորել, չի փափաքիր ուխտանենգներուն յանձնապաստանութիւն ներշնչել: Այդ տարբերեալ իղձերն ու այդ փափուկ զգացումներն են, որով լեցուած է Մանդակունին, եւ այդ սիրտէն կը բղխին նորա խօսքերը, զորս իրաւամբ գնահատած է Փարպեցին, եւ նախնական ձեւին մէջ մեզի հասցուցած է, չհամարձակելով արուեստական ոճերով անոնց վեհութիւնը խանգարել»[10]:

Հովհան Մանդակունի Հայրապետը ցանկանում է համախմբված եւ անսասան պահել իր հոտը՝ քարոզելով անկյալների նկատմամբ սեր եւ ներողամտություն: Տեղին են հետեւյալ խոսքերը. «Անյարմար բանք չեն Մանդակունիին ատենաբանութեան խօսքերը, ինչպէս նիւթը ձեւին զոհող քննադատներ կը կարծեն, այլ ընդհակառակն բարձրահոյ հոգւոյ մը արդիւնքն է, որ երեւան կուգայ»[11]:

Մանդակունու հայրապետության մասին խոսելիս պետք է ճշտել նրա կաթողիկոսության ժամանակաշրջանն ու տեւողությունը: Այս հարցում պատմիչներն ու ժամանակագիրներն իրենց հաղորդած տեղեկություններով եւ տեսակետներով բաժանվում են երկու խմբի. մի մասի կարծիքով Հովհան Մանդակունին հայրապետել է վեց տարի, իսկ մյուս մասի կարծիքով՝ տասներկու: Այս թվերը լիովին տարբեր են, եւ այդ տարբերությունը չենք կարող թվանշանային տառերի նմանությանը վերագրել, ուստի պետք է ընդունել, որ վերոնշյալ տեսակետները որոշակիորեն հիմնավորված են: Եթե նկատի ունենանք նաեւ այն տարիներ-

8 Տե՛ս **Ղազար Փարպեցի,** նշվ. աշխ., էջ 435-444:
9 **Մաղաքիա արք. Օրմանեան**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 472:
10 Անդ, էջ 473:
11 Անդ, էջ 473-474:

ը, երբ Հովհան Մանդակունին մասնակցել է ազատագրական շարժումներին եւ նպաստել երկրի եւ Եկեղեցու պաշտպանությանը՝ սկսած 478 թվականից մինչեւ 490 թ., ապա դասներկու տարին իրավամբ ընդունելի է: Իսկ, երբ նրա կաթողիկոսության տարիները հաշվում ենք խաղաղության հաստատումից հետո՝ Եկեղեցու բարեկարգության համար ծավալած գործունեության շրջանից, երբ Հովհան Մանդակունու կաթողիկոսությունը պաշտոնական եւ պետական վավերացում ստացավ մոտ 484 թ., ապա այս դեպքում հիմնավորվում է երկրորդ տեսակետը: Այսպես՝ Հովհաննես Դրասխանակերտցին իր պատմության մեջ գրում է. «Իսկ մեծ հայրապետն Յոհան Մանդակունի՝ կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց, փոխի առ Քրիստոս»[12]:

Պարսից Պերոզ արքայի մահվանից՝ 484 թ. հետո Հայաստանում խաղաղություն է հաստատվում, եւ Հովհան Մանդակունին հոգեւոր եւ վարչական գործունեություն է ծավալում[13]: Հովհան Մանդակունի Կաթողիկոսին վերագրվող բարեկարգություններից առաջինը կաթողիկոսական նստավայրի տեղափոխությունն էր: Առանց պատմական փաստի եւ հիմնավորվածության այդ գործը վերագրվել է նաեւ Մելիտեին[14]: Իսկ պատմագիրներից ոմանք այդ տեղափոխությունը վերագրում են Վարդան Մամիկոնյանին եւ Գյուտ Կաթողիկոսին, սակայն գիտենք, որ վերջիններս երբեք ժամանակակից եւ գործակից չեն եղել: Ղազար Փարպեցին վկայում է, որ Հովհան Մանդակունի Հայրապետը ամեն անգամ հոգեւոր գործեր ունենալիս մեկնում էր Վաղարշապատ, որտեղ Մայր Տաճարն ու կաթողիկոսական նստավայրն էր, իսկ Դվին էր գալիս միայն քաղաքական գործերի համար: Վահան Մամիկոնյանի մարզպանությունից հետո է, որ Հովհան Մանդակունուն տեսնում ենք Դվինի եկեղեցում գործունեություն ծավալելիս: Պատմիչների հաղորդած բոլոր տեղեկությունները ի մի բերելով՝ կարելի է եզրակացնել, որ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը վերանորոգության կարիք ուներ, ինչի մասին հիշատակում է նաեւ Փարպեցին. «...զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զհնացեալ գործ նախնեացն իւրոց»[15]: Վերանորոգությունը ձեռնարկում է Վահան մարզպանը Շտեայի պատերազմից եւ Պերոզ արքայի մահվանից անմիջապես հետո: Այսպիսով, հայրապետական աթոռի տեղափոխությունը թվագրվում է 485 թվականով:

Հովհան Մանդակունին զբաղվում է նաեւ եկեղեցական կանոնների մշակմամբ. այդ են վկայում նրա անունով մեզ հասած ինը կանոնները, որոնք տեղ են գտել Կանոնագրքում[16]: Գոյություն ունի նաեւ դասներորդ կանոնը, որն առավել ընդարձակ է[17]: Վերոնշյալ կանոնների մշակումը ենթադրում է նաեւ եկեղեցական ժողովի գումարում, սակայն այս մասին որեւէ հիշատակություն չունենք: Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է Շահապիվանի ժողովը՝ «ուր էր Յովհան Մանդակունին»: Ըստ նրա՝ ժողովը տեղի է ունեցել «ի Հազկերտէ ի վերայ քահանայից եւ իշխանացն Հայոց նեղութեան հասնելէն յետոյ»[18]: Ուստի վերոհիշյալ

12 «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 60-61:

13 Տես **Մատաթիա արք. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 475:

14 Տես **Միքայէլ Չամչեան**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամն 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 85:

15 **Ղազար Փարպեցի**, նշվ. աշխ., էջ 157:

16 Տես «Գիրք կանոնաց եւ դատաստանի», Կ. Պոլիս, 1831, էջ 122:

17 Տես անդ, էջ 123:

18 **Ստեփանոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, 1859, էջ 97:

ժողովը չի կարելի նույնացնել Հովսեփ Հողոցմեցիի կաթողիկոսության սկզբում գումարված Շահապիվանի ժողովի հետ: Հազկերտի հալածանքներից եւ Պերոզի բռնություններից հետո միայն՝ Վաղարշի օրոք, Հովհան Մանդակունին կարող էր եկեղեցական ժողով գումարել: Հետեւաբար, ընդունելով Ստեփանոս Օրբելյանի հիշատակությունը՝ ժողովի գումարման հավանական թվականը համարում ենք 486 թ.: Կանոնագրքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Հովհան Մանդակունու կանոնները, որոնք վերաբերում են պահքին եւ տոներին. այդ կանոններում քննարկվում են կիրակի օրերին պաս չպահելու, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին մարտիրոսաց տոներ կարգելու, Քրիստոսի Ծնունդն ու Հայտնությունը միասին՝ հունվարի 6-ին տոնելու եւ այլ հարցեր: Իսկ վերջին ընդարձակ կանոնը խստիվ արգելում է անուսների եւ անարժանների ձեռնադրությունը:

Արժեքավոր են Հովհան Մանդակունու հայրապետության շրջանում կազմված ծիսական գրքերը: Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի ծիսական կարգադրությունները դեռեւս հաստատուն գործածություն չէին ստացել, քանի որ Հովսեփ Հողոցմեցի եւ Գյուտ Կաթողիկոսները այդ խնդիրներով զբաղվելու հնարավորություն չէին ունեցել: Երկրում խաղաղության հաստատումից հետո Հովհան Մանդակունի Կաթողիկոսը ձեռնարկում է այս գործը՝ լրացնում պակասները եւ շտկում թերությունները: Հովհան Մանդակունին փորձում է առավել ամբողջական եւ կատարյալ դարձնել ծիսական կարգերը: Ժամագրքում ուղղակիորեն Հովհան Մանդակունի Հայրապետին են վերագրվում գիշերային ժամերգության «Զարթուցեալքս» քարոզը եւ «Զքէն գոհանամք» աղոթքը[19], Ճաշու երրորդ, վեցերորդ եւ իններորդ ժամերի աղուհացից մեծ քարոզներն ու աղոթքները[20]: Շարականներից «Հռիփսիմեանց համբարձին» վերագրվում է Հովհաննես Կաթողիկոսին, սակայն Հովհան Մանդակունուն, թե Օձնեցուն՝ դեռեւս հայտնի չէ: Չնայած այս անորոշությանը, կարծում ենք, որ Հովհան Մանդակունին մեծ ներդրում ունի այս գործում, քանի որ նրանից առաջ ընկած ժամանակահատվածի համար պատմագիտական աղբյուրները վկայում են միայն սաղմոսների երգեցողության մասին: Մեջբերենք «Զարթուցեալքս» քարոզից մի հատված. «Զարթուցեալքս ամենեքեան ի հանգստենէ քնոյ, զոր շնորհեաց մեզ մարդասէրն Աստուած ի մխիթարութիւն եւ ի սփոփանս տկարութեան մերում: Եւ եկեալքս միաբան հոգեւոր երգով ի փառաբանութիւն եւ ի պատիւ ամենասուրբ անուան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Ահիւ եւ դողութեամբ կայցուք յաղօթս առաջի նորա: Որ ընտրեաց զմեզ ողորմութեամբն իւրով. եւ շնորհեաց մեզ բերել զնմանութիւն երկնային հրեշտակացն ի փառաբանիչս Տեառն Աստուծոյ ամենեցուն եւ մեզ լինիլ...»[21]:

Իր գեղագիտական արժեքով առանձնանում է նաեւ «Զքէն գոհանամք» աղոթքը, որն արտացոլում է Հովհան Մանդակունու՝ առ Աստված դրված անսահման սերն ու հավատքը. «Զքէն գոհանամք, Տէր Աստուած մեր, որ շնորհեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութեամբ: Եւ զարթուցեալ ժամանեցուցեր զմեզ կանխել յերկրպագութիւն ահաւոր եւ փառաւորեալ անուանդ քում սրբոյ: Տո՛ւր մեզ, Տէր, աղաչեմք զքեզ, զմնացուած գիշերիս խաղաղութեամբ անցուցանել. եւ զամենայն ժամանակս կենաց պանդխտութեան մերոյ, երկիւղիւդ քո ամրացո եւ պահեա...»[22]:

---

19 Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 478:

20 Տե՛ս «Կիրակոսի վրդ. Գանձակեցւոյ Համառօտ պատմութիւն», Վենետիկ, 1865, էջ 20:

21 «Ժամագիրք», Երուսաղեմ, 1955, էջ 28:

22 Անդ, էջ 38:

Ծիսարանի կանոններից նրան են վերագրվում Մկրտության եւ Դրոշմի կարգերը, սարկավագի, քահանայի եւ եպիսկոպոսի ձեռնադրության կարգը, «Աթանասի հետեւողությամբ Պատարագամատոյց»-ը, եկեղեցու, ժամահարի, սկիհի եւ մազգմայի օրհնության կարգերը, Պասկի եւ Ապաշխարության կանոնները:

Մաղաքիա Օրմանյանը նշում է, որ առավել ծավալուն էր Հովհան Մանդակունու վարչական գործունեությունը. «որով կը յաջողէր աւերեալ երկիրը վերաշինել եւ զժտեալ հոգիները միաբանել»[23]:

Հովհան Մանդակունու անվամբ մեզ հասած մատենագրական ժառանգությունը արտացոլում է նրա ապրվածաբանական հայացքներն ու վարդապետությունը:

Նիկիայի եւ Կոստանդնուպոլսի տիեզերաժողովներից հետո քրիստոնեական Եկեղեցին դավանում էր «**մի Տէր Յիսուս Քրիստոսի**»՝ շեշտը դնելով Քրիստոսի «**միութեան**» վրա, որով եւ հիմնավորվում էր Փրկագործության խորհուրդը: Եւտիքեսի վարդապետությունը նոր տիեզերաժողովի գումարման պատճառ դարձավ:

Քաղկեդոնի 451 թ. տիեզերաժողովը եւ դրա ընդունած դավանաբանական բանաձեւը՝ «**երկու բնութիւն եւ մի դէմք**» պառակտում են Եկեղեցին: Հակառակ Նիկիո եւ Եփեսոսի տիեզերաժողովների՝ Քաղկեդոնի տիեզերաժողովին մասնակցող եկեղեցական հայրերը վերահաստատում են երկաբնակությունը հետեւյալ բանաձեւումով. «...մէկ եւ նոյն Քրիստոս, Որդի, Տէր, Միածին՝ երկու բնութիւններով, անխառն, անփոփոխ, անանջատ, անբաժան, որովհետեւ միութիւնը չէ՛ ջնջած բնութիւններուն տարբերութիւնը, առնցմէ իւրաքանչիւրը պահած է իր ինքնութիւնը եւ մօտեցած է միասին միակ անձի եւ գոյացութեան մէջ»[24]: Ժողովի ընդունած որոշումը հիմնվում էր Լեւոն պապի՝ Կոստանդնուպոլսի Ֆլավիանոս պատրիարքին ուղարկած նամակի վրա: Եկեղեցու պատմության մեջ այն հայտնի է իբրեւ «Լեւոնի Տումար»:

Արեւելյան միաբնակ եկեղեցիները, մերժելով երկաբնակությունը, հիմնավորում են սեփական դավանաբանական դիրքորոշումը: Նշանավոր հայրերը փաստում են, որ Քաղկեդոնի տիեզերաժողովով Եկեղեցին հակասում է ինքն իրեն եւ վերականգնում «երկու բնութիւն» բանաձեւը, որը նզովել էին Կյուրեղ Ալեքսանդրացին եւ Եփեսոսի ժողովի հայրերը. «Եթէ ոք զմի Քրիստոսն բաժանեսցէ յերկուս երեսս յետ միանալոյն, եւ միայն մերձաւորութիւն եւ պատիւ եւ ճոխութիւն տացէ նմա եւ ո՛չ միութիւն բնութեամբ՝ նզովեսցի»[25]:

Պատմական աղբյուրները թույլ են տալիս ենթադրել, որ քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով Հայ Եկեղեցին չի կարողացել մասնակցել Քաղկեդոնի տիեզերաժողովին: Սակայն խաղաղության հաստատումից հետո Հայ Եկեղեցին հիմնավորում է իր տեսակետներն ու դավանաբանությունը՝ մերժելով երկաբնակությունն ու Լեւոնի Տումարը: Հովհան Մանդակունի Կաթողիկոսը ձեռնամուխ է լինում Ալեքսանդրիայի պատրիարք Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» թարգմանությանը: Այս շրջանում է շարադրվում նաեւ «Ապացոյցք»-ը, որը Հայ Եկեղեցու դոգմատիկ փաստաթղթերից է եւ վերագրվում է Հովհան Մանդակունուն: «Ապացոյցք»-ը Հայ Եկեղեցու դավանաբանական ինքնուրույ-

23 **Մաղաքիա արք. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 480:
24 «Կնիք Հաւատոյ», Ս. Էջմիածին, 1914, էջ 232:
25 Անդ, էջ 232-233:

նության հիմնավորման կարեւորագույն փաստաթղթերից է, որի հեղինակը նյութը չի զոհել ձեւին, այլ առավել մեծ ուշադրություն է դարձրել դոգմատիկ սկզբունքների հիմնավորմանը: «Ապացոյցք»-ը նաեւ հակաճառություն է, որ գրվել է «ընդդէմ դաւանողաց մի Քրիստոս յերկուս բնութիւնս»[26]: Հովհան Մանդակունին մերժում է Քաղկեդոնի տիեզերաժողովի որոշումներն ու երկաբնակությունը եւ պահպանում առաքյալներից մեր Եկեղեցուն ավանդված հավատքն ու վարդապետությունը:

Հայ Եկեղեցին Ս. Երրորդության իր դավանանքով միշտ հավատարիմ է մնում Նիկիայի տիեզերաժողովի 318 հայրերի բանաձեւումին: Հայ եկեղեցական հայրերը, այդ թվում նաեւ Հովհան Մանդակունին, անաղարտ են պահում իրենց հավատքը՝ զգուշանալով Աստծո խորհուրդները մարդկային բանականությամբ մեկնաբանելու եւ քննելու փորձությունից, ինչը կորստյան է դատապարտում հերետիկոսներին: Հայ Եկեղեցական հայրերի նշանաբանն է դառնում Պողոս առաքյալի խոսքը. «Հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ»[27]: Հովհան Մանդակունին հիմնավորում է իր վարդապետությունը «Ի Սուրբ Երրորդութիւն» ճառում, որը չնայած դավանաբանական բովանդակությանը՝ շարադրված է պարզ եւ ըմբռնելի. «...Սրբոյ եւ զուգական Երրորդութեանն երեք անձինք, մի աստուածութիւն, մի էականութիւն, մի իսկութիւն, մի ինքնակամութիւն. մի է թագաւորութիւն, մի է արքայութիւն, մի է տէրութիւն, մի է իշխանութիւն, մի է փառաւորութիւն, մի է բնութիւն, մի է հաւասարութիւն, մի է սրբութիւն, մի է կամք, մի է խորհուրդ, մի է փառք, մի է պատիւ, մի յոյս, մի սէր, մի հաւատ...»[28]: Այս ճառը կարծես ամփոփում է նիկիա-կոստանդնուպոլսյան ողջ հանգանակը: Ճառում Հովհան Մանդակու-նին նշում է, որ Ս. Երրորդությանը պետք է դավանել աներեր հավատքով եւ մեկ անգամ ևս ընդգծում է Ս. Երրորդութեան «**համագոյութեան**» եւ «**ըստ էութեան նոյնութեան**» սկզբունքը[29]:

Հովհան Մանդակունին մեծ ներդրում ունի կանոնագիտության բնագավառում: Հայոց Կաթողիկոսի անունով մ ե զ հ ա ս ա ծ կանոնները հստակորեն արտահայտում են նաեւ նրա աստվածաբանական հայացքները: Հայոց եկեղեցական տոնական տարվա սկիզբն ընդունվել է Քրիստոսի Ծննդյան եւ Հայտնության տոնը, որը Ե դարի սկզբից (կամ գուցե ավելի վաղ շրջանից) մինչեւ Սահակ Պարթեւ Հայրապետի մահը տոնում էին միասին՝ հունվարի 6-ին: Այդ են վկայում Հայոց տոնացույցի («Կանոնք ընթեցուածոց») փվյալները, ինչպես նաեւ Եփրեմ Ասորիի «Չորս աւե-տարանների համաբարբա-ռի մեկնութեան» թարգմանությունը, որտեղ գրված է. «...եւ ծնաւ նա (Քրիստոս), որ օր վեց էր Քաղոց ամսոյ ըստ յունարէն թուոյ»[30]: Սակայն Քրիստոսի Ծնունդն ու Աստվածահայտնությունը միասին հունվարի 6-ին տոնելու կարգը խախտվում է եւ երկու տոնական օրվա վերածվում՝ Ծնունդը տոնվում է դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ին: Եւ այսպես շարունակվում է մինչեւ Հովհան Մանդակունի Կաթողիկոսի հատուկ կարգադրությունը: Մեզ ա ռ ա յ ժ մ անահասկանալի պատճառներով, Հայ Եկեղեցին մի քանի տասնյակ տարիներ խախտում է հին ավանդույթը, քանզի թե՛ Սահակ Պարթեւ Կաթողի**կոսի թարգմանած** եւ **խմբագրած**

26 «Գիրք Թղթոց», Երուսաղեմ, 1994, էջ 128-129:
27 Ա Կորնթ. Բ 5:
28 «Յովհաննու Մանդակունւոյ Ճառք», Վենետիկ, 1860, էջ 209:
29 Անդ:
30 **Ռ. Վարդանյան**, Հայոց տոնացույց, Երեւան, 1999, էջ 95:

«Կանոնք ընթերցուածոց»-ում, թե՛ Անդրեասի 200-ամյա տոմար-տոնացույցում, որոնք հայոց տոնական տարվա հիմքերն էին, սահմանված էր Քրիստոսի Ծննդյան եւ Հայտնության տոները նշել միասին՝ հունվարի 6-ին: 480-ական թվականների սկզբին Հովհան Մանդակունին վերականգնում է հին ավանդույթը՝ դրանով իսկ հայոց եկեղեցական տոնական տարվա սկիզբը, եւ նրա գրած իններորդ կանոնը հիմնավորում է այս մոտեցումը. «Եւ որ Ծնունդ առնեն յառաջ քան զՅայտնութիւնն՝ չէ արժան, զի սուտ է, զի Ծնունդն եւ Յայտնութիւնն մի են, եւ յայտ յընթերցուածոցն է, որ ասէ. «Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս»[31]:

Իսկ Հայոց տոնացույցից տեղեկանում ենք. «Յովհան Մանդակունին վերականգնեց յունուարի 6-ը իբրեւ Քրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան միասնական օր, ինչպէս եւ խմբագրեց «Կանոնք ընթերցուածոց»-ի որոշ յատուածներ կանոնելով նոր տօնական օրեր համապատասխան ընթերցուածներով, որոնք երեւում են ինչպէս նրա կանոններից, այնպէս էլ «Կանոնք ընթերցուածոց»-ի յաւելումներից եւ VI դարի տուեալներից»[32]: Իր այս կարգադրությամբ Հայոց Հայրապետը վերականգնում է նաեւ Հայ Եկեղեցու ծիսական ինքնուրոյնությունը եւ ընդգծում տարբերությունը Հույն եւ Հռոմեական եկեղեցիներից:

Հովհան Մանդակունու կանոնները հիմնականում վերաբերում են ծիսական հարցերին: Օրինակ՝ Բ. Կիւրակէի եւ ի Զատկէ մինչեւ ցՊենտեկոստն ծունր ոչ դնել, Դ. Յաւուրս շաբաթու ոչ դատարկանալ ի գործոց, Ե. Ոչ առնել զէնմունս յուրբաթու եւ ի չորեքշաբաթուջ, Թ. Դիւահարի չհաղորդել մինչեւ սրբեսցի եւ այլն:

Հովհան Մանդակունու օրոք կազմվում են մի շարք ծիսական գրքեր. «...այնպէս որ Հայաստանեայց Եկեղեցւոյ այժմեան ծիսական կարգերը Մանդակունեան կարգադրութիւններ կրնան կոչուիլ»[33]:

Հովհան Մանդակունի Կաթողիկոսից մեզ է հասել նաեւ քսանվեց ճառ, որոնց հեղինակության հարցը մինչ օրս վիճելի է, քանի որ գրիչներից ոմանք այդ նույն ճառերը մակագրել են այլ հեղինակների անունով: Սակայն այս մասին հիշատակություն կա. «Եւ զկնի նորա (Գիւտ Կաթողիկոսից հետո) յաջորդէ զաթոռ հայրապետութեան Յոհան Մանդակունի, որ առլցեալ իսկ էր ամենայն հոգեւոր հանճարով. եւ կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զամենայն աղօթական ժամակարգութիւնս եկեղեցւոյ սրբոյ. եւ յարդարէ եւս ճառս զգուշացուցիչս դիպաւորական կենցաղոյս, որ բերէ զոգւոցն փրկութիւն»[34]: Իսկ Վարդան վարդապետն իր աշխատության մեջ գրել է. «...յօրինեաց զճառս խրատուց» եւ ավելացնում. «... սա թարգմանեաց զերկրորդ Կորնթացւոց թուղթն եւ զՅոհանն»[35]: Չենք կարծում, որ Սահակ Պարթեւից եւ Մեսրոպ Մաշտոցից հետո Սուրբ Գրքի որեւէ մասի թարգմանություն թերի մնացած լիներ, ուստի, կարելի է ենթադրել, որ երկրորդականոն գրքերից Կորնթացիների Գ թուղթը եւ «Յովհաննէս աւետարանչի հանգիստ»-ն են Հովհան Մանդակունի Կաթողիկոսի թարգմանած հատվածները:

Հայոց Հայրապետի ճառերը բարոյա-հոգեբանական մեծ արժեք ունեն եւ ուղեցույց են հավատացյալ քրիստոնյաների համար: Դրանք վերաբերում են հանցանքների խոստովա-

31 «Կանոնագիրք Հայոց», հ. Ա, Երեւան, 1964, էջ 499:
32 **Ռ. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 106:
33 **Մաղաքիա արք. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 478:
34 **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., 1912, էջ 60-61:
35 **Վարդան վրդ. Արեւելցի**, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 55:

նությանը, պահքին, ողորմածությանը, աղքատների մխիթարությանը, երդվելու չար սովորությանը, հիշաչարությանը եւ այլն: Առաջին ճառը մեղքերի խոստովանության եւ զղջման կոչ է եւ պատկերավոր կերպով ներկայացնում է մաքրակենցաղ հավատացյալներին. «Որք Սուրբ Հոգւոյն են ցանկացողք, եւ աստուածային սիրոյն են բաղձալք, գալստեանն Որդւոյն Աստուծոյ սպասեն, եւ անմահ փառացն փափագեն. միշտ ի վերինն խորհին, եւ հանապազ անդ ուրախութիւնսն փափագեն. զառօրեայս արհամարհեն ուրանան, եւ օր ըստ օրէ ի վեր ելանեն՝ ոչ միայն հաւատոցն ճշմարտութեամբ, այլ եւ վարուցն առաքինութեամբք...»[36]: Ապա Հայոց Հայրապետը նկարագրում է մեղսագործին, որը խեղդվում է հանցանքների զարշահոտ ճահճում. «Եւ արդ ո՞վ զիս լացցէ, եւ կամ ո՞վ զիս ողբացէ զմեռեալս մեղօք եւ զկործանեալս անօրէնութեամբ, զանկեալս ի խորս խաւարի եւ յանդունդս ամբարշտութեամբ. զի չարիք իմ չարչարեն զիս, եւ պղծութիւնք իմ սպանանեն: Եւ արդ ո՞րպիսի ինչ լացից, եւ կամ ո՞րպիսի ողբացից զանթիւ մեղաց իմոց զբազմութիւն, որ ի յանցանացս եմ հիւանդացեալ, եւ ծուլութեամբ իմով ցաւագնեալ...»[37]: Մաքրակենցաղ հավատացյալին հակադրելով մեղսագործին՝ Հովհան Մանդակունին կոչ է անում Աստծուց շնորհված ազատ կամքով ընտրել աստվածահաճ, դեպի փրկություն տանող ճանապարհը եւ հասնել երանավետ նավահանգստի: Սակայն մարդն իր բնությամբ սխալական լինելով՝ կամա թե ակամա, գիտակցաբար թե անգիտության հետեւանքով ընկնում է մեղքերի որոգայթը, իսկ մեղքերի արմատները կարելի է կտրել միայն անկեղծ զղջմամբ եւ ապաշխարությամբ. «Արմատք դեղոց բժշկաց զցաւս մարմնոյն առողջացնեն, եւ հոսումն արտասուաց ապաշխարութեան զմեղացն զվէրսն ոգոցն բժշկեն. եւ մանաւանդ որ հանդերձ ողորմութեամբ եւ գթով տնանկացն ապաշխարիցեն: Քանզի բազում արմատք են ախտիցն որ դադարեցուցանեն, որք խառն են ի դեղս բժշկաց. բայց է որ առաւել եւս ազդոյ է առ ի ցաւոցն փարատումն: Նոյնպէս եւ ի դեղս սորա բազում ճգնութիւնք ապաշխարութեան են ի մաքրումն մեղաց. բայց ողորմութիւնն է կարեւոր եւ ազդոյ քան զամենայն առաքինութիւնս առ ի զմեղս քաւելոյ զվէրսն բժշկելոյ հանդերձ ողբովք եւ հառաչանօք եւ գթագին արտասուօք...»[38]: Այսպիսով, Հովհան Մանդակունին խոստովանության եւ ապաշխարության ժամանակ կարեւորում է անկեղծ զղջման, ողորմածության եւ բարեգործության դերը, առանց որոնց ապաշխարանքը դառնում է ձեւական: Եւ կարծես թե այս երկրորդ ճառին լրացնում է Հովհան Մանդակունու վեցերորդ ճառը, որը քարոզում է բարեգութ եւ ողորմած լինել որբերի, տնանկների, հիվանդների, այրիների եւ առհասարակ բոլոր կարիքավորների նկատմամբ, քանզի միայն այդպես կարելի է մեղքերի թողություն եւ փրկություն գտնել. «...Այլ եթէ կամիցիս մեղաց քոց թողութիւն խնդրել, կոչեա զորբս եւ զայրիս, զնեղեալս եւ զտարապեալս, զիսեղս եւ զկոյրս եւ զկաղս եւ զկարօտեալսն եւ զգերիսն, եւ զամենայն քաղցեալս եւ զանմխիթարսն. զնոսա կերակրեա, նոցա միայն սպասաւորեա, զնոսա մխիթարեա, զնոսա սփոփեա, զնոքօք շրջեա, զնոսա յարմարեա, եւ քաղցր բանիւք պաշտեա, զի թողութիւն մեղաց եւ փրկութիւն տան քո եղիցի...»[39]:

36 «Յովհաննու Մանդակունւոյ Ճառք», էջ 13:
37 Անդ, էջ 14:
38 Անդ, էջ 21:
39 Անդ, էջ 59:

Գիտակցելով, որ այդ ծանր եւ պատերազմական ժամանակաշրջանում ազգի ուժը նրա միասնության եւ համախմբվածության մեջ է՝ Հովհան Մանդակունին, որպես բարեխնամ Հայրապետ, սիրո եւ ներողամտության կոչ է անում ժողովրդին. «...Եւ արդ, եղբարք, լուարուք եւ ի միտ առէք զճառս սիրոյ: Զի ամենայն որ սիրէ զԱստուած, սիրէ նաեւ զեղբայր իւր. զի սէրն Աստուծոյ սիրով եղբօրն երեւի...» եւ «...ուր սէրն է, անդ երկիւղ ոչ է. որպէս եւ Յովհաննէս ասէ. «Երկիւղ ոչ գոյ ի սէրն, այլ սէր կատարեալ ի բաց մերժէ զերկիւղ»: Զի երկիւղ ընդ տանջանօք է, եւ սէր ի համարձակութիւն. եւ զի երկիւղ հալածի ի սիրոյ: Եւ ուր սէր ոչ է, անդ է երկիւղ դատաստանին, եւ ահ կորստեան յաւուր մեծի ահեղ ատենին: Իսկ սէր աներկիւղ առնէ զմարդ յամենայն տանջանաց...»[40]:

Դժբախտաբար, հալածանքների պատճառով Ղազար Փարպեցին չի կարողացել շարունակել իր պատմությունը եւ շարադրել Հովհան Մանդակունու հայրապետության երկրորդ շրջանի եւ Վահան Մամիկոնյանի մարզպանության մասին՝ իր երկը ավարտելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ատենաբանությամբ: Իսկ Հովհաննես Դրասխանակերտցին Վահան մարզպանի մասին միայն հաղորդում է. «...շինէր զեկեղեցիս աւերեալս ի թշնամեաց, թելադրութեամբ եւ խրատիւ եւ աղօթից նպաստիւ սուրբ հայրապետին Յովհաննու Մանդակունւոյ»[41]:

Պատմագիրները Հովհան Մանդակունի Կաթողիկոսի մահվան մասին հիշատակություն չունեն: Որոշ կցկտուր տեղեկությունների համաձայն՝ նրա գերեզմանը Շիրակի կամ Վանանդի Բեռնոս գյուղում է գտնվում[42], սակայն չգիտենք այս տեղեկությունը որքանով է արժանահավատ: Մաղաքիա Օրմանյանը առավել հավանական է համարում, որ Հովհան Մանդակունին թաղվել է Դվինում[43]:

40 Անդ, էջ 212-213:
41 **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 79:
42 Տես **Միքայէլ Չամչեան**, Պատմութիւն, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 218:
43 Տես **Մաղաքիա արք. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 482: